ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՀԿ
ՀՀ, ք. Երևան, Բուզանդի 1/3, 4-րդ հարկ
Հեռ. 56 03 60, Էլ. հասցե foi@foi.am, www.foi.am
FREEDOM OF INFORMATION CENTER NGO
1/3 Buzand street, 4th floor, Yerevan, RA

07.09.2012թ.
178-ի 7

ՀՀ ոստիկանապետ
պարոն Վլադիմիր Գասպարյանին

Տեղեկատվություն ստանալու հարցում

Հարգելի պարոն Գասպարյան,

Ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 27 և 27.1 հոդվածների և “Տեղեկատվության ազատության մասին” ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի դրույթներով՝ խնդրում ենք տրամադրել հետևյալ տեղեկությունները.

1. 2012թ. հունվար-սեպտեմբեր ամիսների ընթացքում տեսանկարահանող սարքերի միջոցով քանի՞ ճանապարհատրանսպորտային խախտում է գրանցվել Երեւանում:
2. Այդ խախտումների արդյունքում ինչքա՞ն գումար է գանձվել:
3. Ո՞վ կամ ո՞ր կազմակերպությունն է տնօրինում այն բանկային հաշվեհամարը, որի վրա փոխանցվում են տուգանքների գումարները:
4. Ինչպե՞ս եւ ո՞ր կազմակերպությունն է տնօրինում այդ գումարները:

“Տեղեկատվության ազատության մասին” ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ տեղեկություն ստանալու գրավոր հարցմանը պատասխան տրվում է այն ստանալուց հետո 5-օրյա ժամկետում: Ուստի, խնդրում ենք տեղեկություն ստանալու հարցումին պատասխանել օրենքով սահմանված ժամկետներում:

Կանխավ շնորհակալ եմ:

ԻԱԿ իրավաբան Գեւորգ Հայրապետյան